



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք 10-րդ փողոց 11 վարչական շենք
Հեռ. (0222) 3-49-93, Էլ. փոստ norgyux@mail.ru

0-116

30.12. 2015թ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետ
պարոն Կ.Գուլոյանին

Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 30 հոդվածի 8-րդ կետի համաձայն
Ձեզ է ներկայացվում Նոր գյուղի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի
28-ի թիվ 10 արտահերթ նիստի որոշումները.

Համայնքի ղեկավար՝



Գ. Թադևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, հեռախոս, էլ. Փոստ
norgyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 28 » դեկտեմբերի 2015 թվականի N 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱԿԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով համայնքի **ավագանին որոշում է.**
Հաստատել համայնքի ավագանու 10-րդ արտահերթ նիստի օրակարգը

1. 2015 թվականի դեկտեմբերի 10 ի թիվ. 32-Ն և թիվ. 35 Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին.

Կողմ / 5 /

Դեմ / /

Չկողմատար

ԱՐԱԽԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱՇՈՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ.Թադևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, հեռախոս, էլ. փոստ
norgyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 28 » դեկտեմբերի 2015 թվականի N 37- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 32-Ն և N 35-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով. **համայնքի ավագանին որոշում է**

1. Նոր գյուղի համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 10-ի <<2016թվականի տեղական տնտեսական և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 32-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Նոր գյուղի համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 10-ի „2016թվականի բյուջեն հաստատելու մասին” թիվ 35-Ն որոշման նախաբանում „ մասի” բառը փոխարինել „հոդվածների” բառով:

Կողմ / 5 /

Դեմ / /

Ձևնպահ

ԱՂԱԽԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱՇՈՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Գ.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանել 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները
և դրույթաչափերը (ՀՀ դրամ) .

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված
ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ
հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,
այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի
մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության
օբյեկտների համար՝ 15 000 դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

3) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝ 30 000 դրամ.

4) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝ 50 000 դրամ.

5) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

6) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող
100000 դրամ.

Օբյեկտների համար՝ մինչև

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

1) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող/ոչ հիմնական/
օբյեկտների համար՝ 3 000 դրամ.

2) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5 000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ
օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման
աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ
սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե
սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զարարիտային չափերն
ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր
մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝
տեղական տուրքը սահմանվում է 3 000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման
աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զարարիտային չափերն
ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում
կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման հավելվածի 1-ին կետի
2-րդ ենթակետի .1-ե պարբերությամբ սահմանված դրույթաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության
համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր
մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զարարիտային չափերն ընդլայնող
այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության
փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ
կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով
սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական
այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ 5 000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

3 500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

3500 դրամ:

5. Համայնքի տարածքում

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար

350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

30 000 դրամ:

6. Համայնքի տարածքում քանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր տարվա համար տեղական տուրք սահմանել՝

50 000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝

25000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝

50000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝

200000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝

500000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝

250000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝

100000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար

1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար

2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝

500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար

700 դրամ.

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար

1000 դրամ:

տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու/ բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

1 000 դրամ:

Տեղական վճարի դրույքաչափերի սահմանումը

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության չահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:
3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար սահմանել՝ 10000 դրամ:
4. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝
 - 1) կենցաղային աղբի համար հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 200 դրամ:
 - 2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար ամսական 2000 դրամ:
5. Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել 500 դրամ:

Համայնքի ղեկավար



Գ.Թադևոսյան

2016թ. դեկտեմբերի 10-ին
Գ.Նոր գյուղ